

**ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Իրավական համակարգի արդյունավետության չափանիշը. շատ հաճախ իրավագետների և իրավունքի փիլիսոփաների մոտ առաջանում է հարց. «արդյոք արդյունավետ է այս կամ այն իրավական համակարգը»²: Այս հարցի պատասխանի համար մեզ անհրաժեշտ է քննախոսություն մտցնել **«իրավական համակարգի սոցիալական արդյունավետության ուսցիոնալ չափանիշ»** հասկացությունը: Այս չափանիշի օգնությամբ, մենք հնարավորություն ունենք պարզելու, արդյոք որոշակի իրավական նախադասությունների ամբողջությունը լրիվությամբ և օբյեկտիվորեն նկարագրում է իրավական համակարգի սոցիալական արդյունավետությունը: Լրիվությամբ նկարագրություն համարվում է այն, երբ որոշակի իրավական նախադասությունների ամբողջությունն անհրաժեշտ և բավարար է տվյալ իրավական համակարգի սոցիալական արդյունավետությունը նկարագրելու համար: Իսկ օբյեկտիվ համարվում է այն նկարագրությունը, երբ կազմված են տրամաբանորեն ճշմարիտ նախադասություններ որոշակի իրավական համակարգի (օբյեկտ) մասին:

Այսպես, իրավական մենք կանվանենք այն համակարգերը, որոնց նորմերը կենսագործվում են: Հայտնի խոշոր իրավագետ Ջ. Ռազը առաջարկում է իրավական համակարգի նորմերի կենսագործելիության վերհանման ժամանակ ուշադրություն դարձնել հետևյալ ուղենիշների վրա³.

1. ուշադրություն դարձնել պարտադրող նորմերի պահպանման վրա,
2. գերծ մնալ պարզեցված հաշվարկներից,

¹ ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի սասիբանտ, գիտ. դեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան:

² St. u Kelsen, H. Pure theory of law. 1st ed. Berkeley: University of California Press. 1967. P. 11., Raz, J. The concept of a legal system. 2nd ed. Oxford: Clarendon Press. 1980. P. 206, Raz, J. The identity of legal systems// in Raz J. The authority of law. 1st ed. Oxford: Clarendon Press. 1979. Pp. 85-86, 88:

³ Opt. cit. Raz, J. The concept of a legal system, P. 205:

3. տարբեր կերպ վերաբերվել տարբեր իրավախախտումներին,
4. հաշվի առնել անտեղի հանգամանքներն և սուբյեկտների մտադրությունները,

5. հաշվի առնել հասարակական իրավագիտակցության մակարդակը և դրա ազդեցությունը հասարակության վարքագծի վրա,

6. հաշվի առնել իշխանություն տվող նորմերի օգտագործումը,

7. էական կարևորություն տալ կարևոր սահմանադրաիրավական նորմերի պահպանմանը (կատարմանը):

Հաշվի առնելով Ռազի սահմանած ուղենիշները, փորձենք կառուցել իրավական համակարգի արդյունավետության մեր հետազոտությունը երկու հիմնական կանոնների վրա՝ «կենսագործելիության» և դրանից բխող՝ «հաշվելիության»:

Կենսագործելիության կանոն. կենսագործելիության կանոնի օգնությամբ մենք իրավական համակարգի արդյունավետության նկարագրման համար տարանջատում ենք առավել կարևոր նորմերի կենսագործումը, և ավելի քիչ՝ կարևոր նորմերի կենսագործումը:

1. Խոսելով իրավական համակարգի արդյունավետության վրա ազդող նորմերի կենսագործելիության մասին, առաջին հերթին, մենք նկատի ունենք, սահմանադրական նորմերի կենսագործումը: Սահմանադրական նորմերի կենսագործումը իր հերթին, կարելի է բաժանել երկու մասի՝ բարձր կարգի և առաջին կարգի նորմերի կենսագործում: Բարձր կարգի են համարվում այն նորմերը, որոնք թույլատրում, արգելում կամ պարտադրում են իրավաստեղծ մարմնին ընդունել որոշակի նորմեր⁴: Մրանցից թույլատրող բարձր կարգի նորմերը կոչվում են իրավասություն տվող կամ իրավագործող նորմեր- (POp):

Պատերակցենք, որ A պետության սահմանադրությունը պարունակում է հետևյալ նորմատիվ ցանցը՝ N1, N2...Nn: Այս նորմատիվ ցանցի մեջ մտնող նորմերի մեջ կան իրավագործող, ինչպես նաև բարձր կարգի պարտադրող և արգելող նորմեր: Այդ պետության օրենսդիր իշխանության մարմինը հիմնվելով սահմանադրական իրավագործող N_i նորմի վրա ընդունում է N_j նորմը: Այսպես, օրենսդիր իշխանության մարմնին կենսագործում (օգտագործում) է սահմանադ-

⁴ Sté u von Wright, G. Norm and action. 1st ed. London: Routledge and Kegan Paul. 1963. P. 192, von Wright, G. Norms of higher order. Studia logica, Vol. 42 (2-3), 1983. P. 123, Wright, G. On the logic of norms and actions. //in Hilpinen, R. New studies in deontic logic. 1st ed. Dordrecht, Holland: D. Reidel Pub. Co. 1981. P. 6:

րական իրավագործող N_i նորմը: Մակայն հարց է առաջանում. արդյոք եթե օրենսդիր իշխանության մարմինը չի օգտագործում իրավագործող N_i նորմը և ընդունում նոր N_i նորմ, ապա այն խախտում է N_i նորմը: Հաշվի առնելով, որ նորմի խախտումը որոշակի հետևանք է առաջացնում (առավել բարձր կարգի նորմի խախտման դեպքում՝ իրավական անվավերություն), մեր պատասխանն է՝ ո՛չ, իրավագործող նորմի չօգտագործումը՝ նորմի խախտում չէ: Եվ, առհասարակ, իրավագործող նորմն այն եզակի բարձր կարգի նորմն է, որն, ըստ էության, անհնար է խախտել: Օրինակ, օրենսդիրն, ընդունում է նորմ, որի իրավագործությունը չունե՛ր՝ դա բացակայում էր իրավագործող կամ բարձր կարգի այլ նորմի համապատասխան: Այս դեպքում, սրա հետևանքը՝ դժվար է համարել իրավական անվավերությունը: Քանզի այստեղ չի առաջանում իրավական հետևանք: Դա նույնն է, որ իրավաբանական ֆակուլտետի ուսանողն կազմի օրենքի նախագիծ և դա ընդունեն լսարանում: Այսպես, անիմաստ է խոսել, իրավագործող նորմերի չկենսագործման (խախտման) մասին: Իրավագործող նորմերն անհնար է խախտել:

Մակայն, լրիվ այլ է հարցը կապված բարձր կարգի պարտադիր կամ արգելող նորմերի հետ: Այս նորմերն օրենսդիրը, կա՛մ պետք է կատարի, կա՛մ պահպանի: Այսպիսով, այս նորմերը հնարավոր է խախտել: Օրինակ, առկա է սահմանադրական N_i նորմը, համաձայն որի՝ արգելվում է, որ օրենսդիրը որևէ բան սահմանի պարտադիր և միաժամանակ, այդ նույն բանը սահմանի նաև ոչ պարտադիր ($O(p \rightarrow Op)$): Առկա է նաև սահմանադրական N_o նորմը, համաձայն որի՝ արգելվում է, որ օրենսդիրը որևէ բան սահմանի պարտադիր և ժխտի իր սահմանածը (այսինքն՝ դարձնի արգելված) ($O(p \rightarrow Op)$): Այս նորմերը կարելի է անվանել մեթանորմեր, որոնք ապահովում են նորմատիվ համակարգի (իրավական համակարգի) անհակասականությունը: Այսպես, եթե օրենսդիրն ընդունի նորմ, որով կխախտի այս նորմերից մեկը, այդ նորմն ընդունման պահից իրավաբանորեն անվավեր է, քանզի խախտվել են այս երկու բարձր կարգի արգելքները: Նույն հետևանքը կլինի նաև, եթե օրենսդիրը խախտի բարձր կարգի որևէ պարտադիր նորմ: Մակայն, հնարավոր է, որ բարձր կարգի պարտադիր նորմը չկենսագործվի, ոչ թե ակտիվ գործողություններով, խախտվի, այլ՝ չկենսագործվի պասիվ գործողություններով: Իհարկե, տվյալ դեպքում՝ ավելորդ է խոսել նորմը խախտելու մասին,

այլ տեղին է խոսել նորմը չկատարելու մասին: Այսպիսով սահմանադրական բարձր կարգի պարտադիր նորմերի (բացառությամբ իրավագործող նորմերի) խախտումը և չկատարումն իրավաստեղծ մարմնի կողմից էական ազդեցություն ունի գործող իրավակարգի իրավական համակարգի վրա: Նաև հնարավոր են սահմանադրական բարձր կարգի պայմանական պարտադիր նորմեր՝ $(O(p \rightarrow Op))$, որոնց խախտումը նույնպես լուրջ ազդեցություն է թողնում իրավական համակարգի սոցիալական արդյունավետության վրա:

2. Մյուս նորմերը, որոնց խախտումը և չկատարումն էապես ազդում են իրավական համակարգի սոցիալական արդյունավետության վրա՝ սահմանադրական առաջին կարգի պարտադիր և արգելող նորմերն են $(O(p \rightarrow Op))$: Այս նորմերը, ոչ թե ուղղված են նորմատիվ կամարտահայտմանը, այսինքն՝ նորմերի ընդունմանը, այլ կարգավորում են հասարակական հարաբերությունների մասնակիցների նորմատիվ ակտերի ընդունման հետ չկապված հարաբերությունները:

3. Մյուս նորմերը, որոնց խախտումը և չկատարումը ազդում են իրավական համակարգի արդյունավետության վրա՝ օրենսդրական բարձր կարգի պարտադիր և արգելող նորմերն են, ինչպես նաև օրենքական առաջին կարգի պարտադիր և արգելող նորմերն են: Անհրաժեշտ է նշել, որ հնարավոր են օրենքական բարձր կարգի պարտադիր պայմանական նորմեր, որոնց խախտումը կամ չկատարումը նույնպես ազդում է իրավական համակարգի սոցիալական արդյունավետության վրա:

4. Իրավական համակարգի արդյունավետության վրա նաև էապես ազդում են մյուս իրավական ակտերի՝ բարձր կարգի և առաջին կարգի նորմերը:

Ելնելով վերոնշյալից փորձենք տալ «կենսագործման կանոնի» կառուցվածքը.

1. սահմանադրական բարձր կարգի նորմերի կենսագործումը (բացառությամբ իրավագործող նորմերի),

2. սահմանադրական առաջին կարգի նորմերի կենսագործումը (բացառությամբ թույլատրող նորմերի),

3. սահմանադրական պայմանական նորմերի կենսագործումը (բացառությամբ պայմանական բարձր կարգի և առաջին կարգի թույլտվությունների),

4. սահմանադրական բարձր կարգի և առաջին կարգի թույլտվությունների օգտագործումը,

5. օրենքական բարձր կարգի նորմերի կենսագործումը (բացառությամբ իրավագործող նորմերի),

6. օրենքական առաջին կարգի նորմերի կենսագործումը (բացառությամբ թույլատրող նորմերի),

7. օրենքական պայմանական նորմերի կենսագործումը (բացառությամբ պայմանական բարձր կարգի և առաջին կարգի թույլտվությունների),

8. օրենքական բարձր և առաջին կարգի թույլտվությունների օգտագործումը,

9. այլ իրավական ակտերի բարձր կարգի և առաջին կարգի նորմերի կենսագործումը (բացառությամբ բարձր կարգի և առաջին կարգի թույլտվությունների), ինչպես նաև պայմանական նորմերի կենսագործումը (բացառությամբ պայմանական բարձր կարգի և առաջին կարգի թույլտվությունների):

Այս կանոնից բխում է «իրավական համակարգի արդյունավետության հաշվարկելիության» կանոնը, որը սահմանում է, թե որոնք են քիչ արդյունավետ և որոնք են անարդյունավետ իրավական համակարգերը⁵: Դրա համար կարելի է կատարել հետևյալ հաշվարկը.

1. Եթե գործող իրավակարգի իրավական համակարգում չեն կենսագործվում 40-50% բարձր կարգի նորմերը, ապա այդ իրավական համակարգը՝ քիչ արդյունավետություն ունի: Այլ կերպ ասած, իրավաստեղծ մարմինները չեն ստեղծի նորմերի 40-50%-ը, որոնք պետք է ստեղծեին կամ կստեղծեն այնպիսի նորմեր, որոնք իրավաբանորեն անվավեր են: Այդպես հասարակական հարաբերությունների կարգավորումը 40-50%-ով տեղի կունենա կամ տվյալ իրավակարգի անվավեր նորմերով, կամ էլ՝ այլ իրավակարգի նորմերով (այդ թվում՝ գործողին նախորդող իրավակարգի նորմերով), կամ էլ՝ ոչ իրավական (էթիկական կամ բարոյական) նորմերով:

2. Եթե գործող իրավակարգի իրավական համակարգում չեն կենսագործվում առնվազն 50+1% բարձր կարգի նորմերը, ապա այդ իրավական համակարգը՝ անարդյունավետ է: Այլ կերպ ասած, իրա-

⁵ «Հաշվարկելիության կանոնը» կիրառելի չէ իրավական համակարգի սոցիալական անարդյունավետության գրեթե անհավանական դեպքերի վրա:

վաստեղծ մարմինները չեն ստեղծի նորմերի առնվազն 50+1%-ը, որոնք պետք է ստեղծեին կամ կստեղծեն այնպիսի նորմեր, որոնք իրավաբանորեն անվավեր են: Այդպես հասարակական հարաբերությունների կարգավորումը առնվազն 50+1%-ով տեղի կունենա՝ կամ տվյալ իրավակարգի անվավեր նորմերով, կամ էլ՝ այլ իրավակարգի նորմերով (այդ թվում՝ գործողին նախորդող իրավակարգի նորմերով), կամ էլ՝ ոչ իրավական (էթիկական կամ բարոյական) նորմերով:

3. Եթե գործող իրավակարգի իրավական համակարգում չեն կենսագործվում 40-50%-ը առաջին կարգի նորմերի, ապա այդ իրավական համակարգը քիչ արդյունավետություն ունի: Դա նշանակում է, որ գործող իրավակարգի նորմերի փոխարեն 40-50%-ով կկենսագործվեն բոլորովին այլ նորմեր:

4. Եթե գործող իրավակարգի իրավական համակարգում չեն կենսագործվում առնվազն 50+1%-ը առաջին կարգի նորմերի, ապա այդ իրավական համակարգը անարդյունավետ է: Դա նշանակում է, որ գործող իրավակարգի նորմերի փոխարեն 40-50%-ով կկենսագործվեն բոլորովին այլ նորմեր:

5. Եթե գործող իրավակարգի իրավական համակարգում չեն կենսագործվում բարձր կարգի և առաջին կարգի նորմերը 50%-ով, ապա այդ իրավական համակարգը սոցիալապես քիչ արդյունավետ է:

6. Եթե գործող իրավակարգի իրավական համակարգում չեն կենսագործվում բարձր կարգի և առաջին կարգի նորմերը առավել քան 50%-ով, ապա այդ իրավական համակարգը սոցիալապես անարդյունավետ է:

Անհրաժեշտ է նաև անդրադառնալ այն հարցին, հնարավոր է, որ քիչ արդյունավետ կամ անարդյունավետ իրավական համակարգը ետ դառնա իր նորմալ վիճակին: Տրամաբանորեն հնարավոր են դեպքեր, երբ քիչ արդյունավետ իրավական համակարգը վերականգնի իր արդյունավետությունը: Սակայն, անարդյունավետից վերադարձ դեպի արդյունավետության էմպիրիկորեն գրեթե անհնար է: Անշուշտ, հնարավոր է, որ 51% իրավանորմերի չկենսագործման դեպքում, տեղի ունենա «հրաշք», և գործող իրավակարգի իրավական համակարգը անարդյունավետությունից վերադառնա դեպի արդյունավետություն: Սակայն, էմպիրիկորեն նման դեպքեր չեն հանդիպում:

Պետք է նշել, որ գործող իրավակարգում իրավական համակարգի անարդյունավետության դեպքում, հարցը լուծվում է նոր Սահմա-

նադրության (կամ Հիմնական օրենքի) ընդունմամբ և նոր իրավակարգի հաստատմամբ: Եթե այս նոր իրավակարգում, որ գործում է է ժամանակահատվածում իրավական համակարգը դառնում է անարդյունավետ, և սկսում են գործել նախկին իրավակարգի՝ LO₁ նորմերը, որոնք գործում էին տ ժամանակահատվածում, այս դեպքում ևս չենք կարող ասել, որ LO₁-ը վերադարձրեց իր արդյունավետությունը: Քանզի ինքն արդյունավետ է նոր իրավակարգի պայմաններում և այլ ժամանակահատվածում՝ է-ում: Իսկ իր գոյության ժամանակահատվածում՝ տ-ում այն անարդյունավետ էր (շարունակում է մնալ): Բայց նման դեպքեր ևս տրամաբանորեն հնարավոր են, սակայն էմպիրիկորեն չեն հանդիպում: Քանզի, դժվար է պատկերացնել, որ նոր իրավակարգում, նախկին իրավակարգը ձեռք բերի սոցիալական արդյունավետություն նորի հաշվին: Քանզի, եթե որևէ գործող իրավակարգի իրավական համակարգ դառնում է անարդյունավետ, ապա տեղի է ունենում հեղափոխություն կամ հեղաշրջում և ընդունվում է նոր Սահմանադրություն: Իսկ դա արդեն տեղի է ունենում լրիվ այլ ժամանակահատվածում (t₃): Անշուշտ, հնարավոր է, որ նոր իրավակարգը՝ LO₃-ը, հիմնվի նախկին՝ LO₁ իրավակարգի Սահմանադրության և հիմնական օրենքների վրա: Սակայն, դրանով իսկ մենք չենք կարող պնդել, որ LO₁ դարձավ արդյունավետ: Ընդհակառակը, LO₁ շարունակում է մնալ անարդյունավետ, քանզի այս արդեն տեղի է ունենում նոր իրավակարգի՝ LO₃-ի պայմաններում և, հետևաբար, նոր ժամանակահատվածում (t₃):

Իրավական համակարգի նույնականացման չափանիշը. Չատ հաճախ տարբեր իրավիճակներում իրավագետները վիճում են այս կամ այն նորմի՝ գործող իրավակարգին պատկանելու վերաբերյալ: Եվ չեն գտնում միասնական չափանիշ, որի օգնությամբ նրանք կհաջողեին իրենց փաստարկներում: Այս հարցում, որոշակի հստակություն մտցնելու համար, մենք առաջարկում ենք մտցնել քննախոսություն **«իրավական համակարգի նույնականացման ռաջիոնալ չափանիշ»** հասկացությունը: Դրա օգնությամբ մենք հնարավորություն ունենք պարզելու, արդյոք որոշակի նորմատիվ նախադասությունների ամբողջությունը լրիվությամբ և օբյեկտիվորեն նկարագրում է տվյալ իրավական համակարգում իրավաբանորեն վավեր նորմերը: Նկարագրությունը համարվում է լրիվ, եթե որոշակի նորմատիվ նախադասությունների ամբողջությունն անհրաժեշտ և բավարար է տվյալ

իրավական համակարգի իրավաբանորեն վավեր նորմերը նկարագրելու համար: Օբյեկտիվ են համարվում օբյեկտի (նորմերի) մասին այն նորմատիվ նախադասությունները, որոնք հանդիսանում են տրամաբանորեն ճշմարիտ:

Իրավական նորմերի իրավաբանական վավերության ավանդական տեսության համաձայն, իրավական նորմերը իրավաբանորեն վավեր են իրար հաջորդող իրավակարգերում մինչև՝ օրենսդրի կամ իրավաստեղծ մարմնի կողմից իրենց դեռոգացնելը և հանելը շրջանառությունից, և (կամ) իրավասու դատարանի կողմից անվավեր ճանաչելը:

Մակայն այս ավանդական քննախոսությունը առաջացնում է լուրջ խնդիրներ: Ինչպես նշում են հայտնի իրավագետներ Խ. Մորետտն և Պ. Նավառոն, ավանդական քննախոսությունը հանգեցնում է հետևյալ խնդիրներին⁶.

ա. միմյանց հետ մրցակցող իրավագործող նորմերի հարցը. երկու տարբեր իրավակարգերի՝ LO₁-ի և LO₂-ի նորմերը, սահմանում են միմյանց հետ մրցակցող իրավագործող նորմեր:

բ. Համակարգի տրամաբանական անորոշություն. նախկին իրավակարգի նորմի դեռոգացիայի դեպքում անհրաժեշտ կլինի վերացնել նաև այդ նորմերի տրամաբանական հետևանքները (այլ նորմեր), և այսպիսով, դա իր հերթին կբերի նորմատիվ համակարգի տրամաբանական անորոշության:

գ. Տվյալ իրավակարգի անկախ նորմերի նույնականացման համար մեզ անհրաժեշտ է փնտրել այդ նորմերը նախորդ իրավակարգերում և այդպես շարունակ, որը կարող է հանգեցնել անվերջ մակածման դեպի ետ (*regressus ad infinitum*):

Այսպիսով, իրապես լուրջ խնդիրներ է առաջացնում իրավական նորմերի վավերության վերաբերյալ ավանդական քննախոսությունը:

Որպեսզի վերացնենք ավանդական քննախոսության խնդիրները, դրա համար մեզ անհրաժեշտ է մտցնել **«նույնականացման կանոն»** հասկացությունը: Այս կանոնի միջոցով կարելի է նույնականացնել իրավական համակարգի անկախ և կախյալ նորմերը: Նորմը համարվում է անկախ, եթե այն հանդիսանում է իրավակարգի սկզբնական

⁶ Sté u *Moreso, José Juan, Navarro, E. Pablo. The reception of norms, and open legal systems//* in Paulson, S. and Paulson, B. *Normativity and norms*. 1st ed. Oxford: Clarendon Press. 1998. P. 81:

իրավական համակարգի նորմատիվ ցանցի անդամ և համակարգորեն չի կապված իրավական համակարգի այլ նորմերի հետ⁷: Այս դեպքում նորմն անկախ է գործող իրավակարգի բոլոր իրավական համակարգերում LSt+1: Կախյալ է համարվում այն նորմը, որը գենետիկորեն կամ դեդուկտիվորեն կապված է գործող իրավակարգի այլ նորմերի հետ: Նորմը գենետիկորեն կապված է գործող իրավակարգի իրավական համակարգի նորմերի հետ, եթե այն առաջացել է բարձր կարգի նորմի պահանջով կամ թույլտվությամբ (իրավագործող նորմի օգտագործումով)⁸: Նորմը դեդուկտիվորեն կապված է գործող իրավակարգի իրավական համակարգի նորմերի հետ, եթե այն համարվում է գործող իրավակարգի իրավական համակարգի նորմերից մեկի տրամաբանական հետևանքը: Քանի, որ այս նույնականացման կանոնի օգնությամբ մենք հստակ նույնականացնում ենք իրավակարգի անկախ և կախյալ նորմերը, ապա մենք կարող ենք պնդել, որ հաղթահարում ենք ավանդական քննախոսության regressus ad infinitum-ի խնդիրը: Հաջորդ խնդիրների՝ «հավերժ» վավեր նորմի և համակարգի տրամաբանական անորոշության լուծումը բխում է մեր տված՝ regressus ad infinitum-ի խնդրի լուծումից: Այսպես, նորմերի միջև գենետիկական և դեդուկտիվ կապի թեզից բխում է, որ նորմի իրավաբանական վավերությունը, ոչ այլ ինչ է, քան հաջողությամբ նորմատիվ փաստի ներառումը գործող իրավակարգի մեջ⁹: Իսկ, եթե այն անհաջողությամբ է տեղի ունենում, այսինքն՝ տեղի է ունենում գենետիկ խզում (խախտվում է բարձր կարգի պարտադիր նորմը կամ բարձր կարգի արգելող նորմը), ապա՝ այն իրավաբանորեն անվավեր է: Այստեղ, խոսքը չի գնում նորմի սոցիալական փաստի անվավերության (չգործող լինելու) մասին, քանզի այն անվավեր չէ, այլ տրամաբանորեն վավեր է (նորմը գործող է), այլ խոսքը գնում է նրա իրավաբանորեն անվավերության մասին: Ելնելով սրանից, կարող ենք

⁷ St' u Caracciolo R. El sistema juridico. Problemas actuales. Madrid: Centro de Estudios Constitucionales. 1988. P. 31:

⁸ Սա այն է ինչ հայտնի իտալացի իրավունքի փիլիսոփա Ն. Բոբբիոն անվանում է իրավանորմի ձևական գործողություն (վավերություն):- St' u Bobbio N, *Considerations introductives sur le raisonnement des juristes. Revue internationale de philosophic*, vol. 8. Pp. 72-73:

⁹ St' u Moreso, José Juan, Navarro, E. Pablo. The reception of norms, and open legal systems// in Paulson, S. and Paulson, B. Normativity and norms. 1st ed. Oxford: Clarendon Press. 1998. P. 276:

պնդել, որ իրավաբանական վավերությունը՝ գործող իրավակարգի նորմի հատկանիշ է: Իսկ հեղափոխության կամ *coup d'état*-ի դեպքում, իրավաբանորեն վավեր նորմը կորցնում է գենետիկական և դեդուկտիվ կապը նոր իրավակարգի նորմերի հետ: Այսինքն, հետհեղափոխական իրավակարգում դառնում է անվավեր¹⁰: Նրանք չեն շարունակում իրենց իրավաբանական վավերությունը նոր իրավակարգում լրակյաց ձևով: Քանզի, լրակյաց ձևով վավերությունն ընդունելու դեպքում կլինի, որ իրավակարգերը չեն փոխվում և, նույնն է մի պետության իրավակարգը 514 թվականին (եթե իհարկե, այդ պետությունը եղել է) և 2014 թվականին:

Այսպիսով, մեր իրավական համակարգի նույնականացման կանոնի կառուցվածքը գրեթե ամբողջությամբ համապատասխանում է ժամանակակից խոշոր իրավագետ Ե. Բուլիգինի կողմից առաջ քաշած նույնականացման կանոնի կառուցվածքին¹¹.

1. Նորմատիվ ցանց՝ N_1, N_2, \dots, N_n -ը, համարվում է գործող իրավակարգի սկզբնական իրավական համակարգը, և այդ նորմատիվ ցանցը հանդիսանում է գործող իրավակարգի սահմանադրության նորմերը:

2. Եթե N_j նորմը համարվում է գործող իրավակարգի իրավական համակարգում (LS_i) վավեր և լիազորում է պետական մարմնին ընդունել N_i նորմը և պետական մարմինն ընդունում է N_i նորմը, ապա N_i նորմը հանդիսանում է վավեր տվյալ գործող իրավակարգի բոլոր իրավական համակարգերում, որոնք հաջորդում են LS_i - ին, այսինքն՝ LS_{i+1} – ում:

3. Եթե N_j նորմը համարվում է գործող իրավակարգի իրավական համակարգում (LS_i) վավեր և լիազորում է պետական մարմնին ընդունել N_i նորմը և դրանով իսկ ենթարկել դեռոզացիայի N_k նորմը, և պետական մարմինն ընդունում է N_i նորմը, ապա N_k նորմը հանդիսանում է անվավեր տվյալ գործող իրավակարգի բոլոր իրավական համակարգերում, որոնք հաջորդում են LS_i - ին, այսինքն՝ LS_{i+1} – ում:

¹⁰ Սակայն, այն չի դառնում տրամաբանական չգործող, քանզի առկա է նրա գործողության սոցիալական փաստը:

¹¹ Sté u Bulygin, E. Algunas consideraciones sobre los sistemas jurídicos. Doxa. N. 09. 1991. Pp. 263-264:

4. Բոլոր վավեր նորմերը գործող իրավակարգի իրավական համակարգում համարվում են վավեր, քանի դեռ դրանք չեն դեռագացվել այլ նորմերով:

5. Բոլոր գործող նորմերի տրամաբանական հետևանքները համարվում են վավեր նորմեր, քանի դեռ դրանք չեն դեռագացվել այլ նորմերով:

Սրանց անհրաժեշտ է նաև ավելացնել՝

6. Եթե N_j նորմը համարվում է գործող իրավակարգի իրավական համակարգում (LS_i) վավեր և պարտադրում է պետական մարմնին ընդունել N_i նորմը, իսկ պետական մարմինը՝ ընդունում է ոչ թե N_i նորմը, այլև՝ N_p նորմը, ապա N_p նորմը համարվում է անվավեր գործող իրավակարգի իրավական համակարգ LS_i - ին հաջորդող բոլոր իրավական համակարգերում, այսինքն՝ LS_{i+1} – ում:

7. Եթե N_j նորմը համարվում է գործող իրավակարգի իրավական համակարգում (LS_i) վավեր և արգելում է պետական մարմնին ընդունել որոշակի նորմեր, իսկ պետական մարմինն ընդունում է այդ նորմերը, ապա դրանք համարվում են անվավեր գործող իրավակարգի իրավական համակարգ LS_i - ին հաջորդող բոլոր իրավական համակարգերում, այսինքն՝ LS_{i+1} – ում:

8. Եթե տեղի է ունենում հեղափոխություն կամ *coup d'état*, և որևէ քաղաքական կազմակերպություն կամ անհատների խումբ գալիս է իշխանության հակասահմանադրական եղանակով, ապա նախկին իրավակարգի նորմերը կորցնում են իրենց վավերությունը նոր իրավակարգի իրավական համակարգերում:

Սակայն այստեղ պետք է նշել, որ նախկին իրավակարգի նորմի իրավաբանական գործողության (վավերության) կորուստը ամեննին չի նշանակում, որ այն անպիտան է դառնում նոր իրավակարգում: Ընդհակառակը, այդ նորմը հնարավոր է, որ կիրառվի նոր իրավակարգում, եթե նոր իրավակարգում առկա է նորմ, որի համաձայն այն ճանաչում է նախկին իրավակարգի՝ տվյալ նորմի կիրառելիությունը գործող իրավակարգում:

Անհրաժեշտ է նաև նշել, որ գործող իրավակարգում կարող են նաև կիրառվել այլ իրավակարգերի պատկանող և այդ իրավակարգերում գործող և՛ վավեր, ինչպես նաև այդ իրավակարգերում գործող և՛ անվավեր նորմերը: Սրա վառ օրինակներից է միջազգային մասնավոր իրավունքի նորմերի կիրառումը գործող իրավակարգերում:

Երբ մի պետության օրենսդրական նորմերը կիրառվում են այլ պետության իրավակարգում:

Գործող իրավակարգում կարող են նաև կիրառվել հենց տվյալ գործող իրավակարգում անվավեր նորմեր: Օրինակ, անվավեր նորմը կիրառվում է այնքան ժամանակ, մինչև որ տվյալ իրավական համակարգում սահմանված կարգով չի փաստարկվում կամ հռչակվում նորմի իրավաբանորեն անվավերությունը:

Եզրակացություն. կարելի է ասել, որ իրավական համակարգի արդյունավետության չափանիշը բաղկացած է երկու հիմնական կանոնից՝ «կենսագործելիության կանոն» և «հաշվարկելիության կանոն»: Այս կանոնների օգնությամբ, հնարավոր է դառնում որոշել որոշակի գործող LO իրավակարգի՝ LS իրավական համակարգի սոցիալական արդյունավետությունը:

Նույնը կարելի է ասել իրավական համակարգում իրավանորմերի նույնականացման չափանիշի մասին: Այն կազմված է «նույնականացման կանոնից»: Վերջինիս օգնությամբ հնարավոր է դառնում որոշակի գործող LO իրավակարգի՝ LS իրավական համակարգում նույնականացնել իրավաբանորեն վավեր իրավանորմերը:

Այսպիսով, կարելի է ասել, որ իրավական համակարգի արդյունավետության չափանիշը բաղկացած է երկու հիմնական կանոնից՝ կենսագործելիության կանոն և հաշվարկելիության կանոն: Այս կանոնների օգնությամբ, հնարավոր է դառնում որոշել որոշակի գործող LO իրավակարգի՝ LS իրավական համակարգի սոցիալական արդյունավետությունը:

Նույնը կարելի է ասել իրավական համակարգում իրավանորմերի նույնականացման չափանիշի մասին: Այն կազմված է՝ նույնականացման կանոնից: Վերջինիս օգնությամբ հնարավոր է դառնում որոշակի գործող LO իրավակարգի՝ LS իրավական համակարգում նույնականացնել իրավաբանորեն վավեր իրավանորմերը:

Тигран Казарян

Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

КРИТЕРИИ ЭФФЕКТИВНОСТИ И ИДЕНТИФИКАЦИИ ПРАВОВОЙ СИСТЕМЫ

Критерий социальной эффективности правовой системы состоит из двух правил- «правило реализации» и «правило вычисления». С помощью этих правил становится возможным определить социальную эффективность правовой системы (LS) действующего правопорядка (LO).

То же самое можно сказать о критерии идентификации правовой системы. Он состоит из правила идентификации. С помощью последнего становится возможным идентифицировать юридически действующие правовые нормы правовой системы (LS) действующего правопорядка (LO).

Tigran Ghazaryan

PHD student at the YSU Chair of Theory and History of State and Law

THE CRITERIA OF EFFICIENCY AND IDENTIFICATION OF LEGAL SYSTEM

Criterion of social efficiency of the legal system consists of two rules; «rule of realization» and «rule of computation». These rules help us to determine social efficiency of the legal system of existing legal order.

The same we can say about the criterion of identification of the legal system. It consists of the «rule of identification». The latter rule helps us to identify legal valid norms within the legal system of acting legal order.

Բանալի բառեր՝ իրավական համակարգի սոցիալական արդյունավետության չափանիշ, իրավական համակարգի նույնականացման չափանիշ, կենսագործելիության կանոն, հաշվարկելիության կանոն, նույնականացման կանոն:

Ключевые слова: критерий эффективности правовой системы, критерий идентификации правовой системы, правило реализации, правило вычисления, правило идентификации.

Key words: criterion of effectiveness of legal system, criterion of identification of legal system, rule of realization, rule of computation, rule of identification.